ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
2017 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի
2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 4

ԲԱԺԻՆ 2. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային
ծրագրի կատարման ցուցանիշները 5

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 5

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....5

ԲԱԺԻՆ 3. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային
գործունեության մոնիթորինգի արդյունքները 7

3.1. Համակարգչային և սերվերային տեխնիկայի համալրում
և լրասարքերի ձեռքբերում 8

3.2. Օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների
ձեռքբերում և օպտիկամանրաթելային
ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքներ 8

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման
ենթակա ներդրումների ծավալը..... 9

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված
ներդրումների ծավալը..... 9

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 9

Եզրակացություններ.....10

Հղումներ օգտագործված նյութերին 11

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի 18-րդ կետի և արտացոլում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2017 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականների ներդրումային ծրագիրը և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին լիցենզավորված ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի
2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի տարեկան ներդրումային ծրագիրն ուղղված է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգում տվյալների հաղորդման ենթակառուցվածքների արդիականացմանը: Մասնավորապես՝ ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել 23,4 մլն դրամ ներդրումներ՝ համակարգչային տեխնիկայի համալրման և լրասարքերի ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների ներկայացված է Գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1



Ներդրումների մեծ մասը՝ 17,6 մլն դրամ, նախատեսվում էր օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների ձեռքբերման և օպտիկամանրաթելային ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքների իրականացման, 5,8 մլն՝ դրամ համակարգչային և սերվերային տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 2.
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2017 թվականի ընթացքում կատարել է 20,2 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 19,5 մլն դրամի ներդրումներ: Մնացած 0,7 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2017թ.	2017թ. սկզբի դրու-թյամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների ձեռքբերում	10,1	9,1	90%	9,7	0,3	9,9
2	Համակարգրային տեխնիկայի ձեռքբերում	3,2	2,2	68%	2,2	-	2,2
3	Սերվերային տեխնիկայի ձեռքբերում	2,6	1,4	55%	1,4	0,1	1,4
4	Օպտիկամանրաթելային ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքներ	7,4	6,7	90%	6,7	-	6,7
	Ընդամնեը	23,4	19,5	83%	19,9	0,3	20,2

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 1-ից, ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 83%-ով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	0,3	2%	0,2	1%
2	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	4,2	21%	4,2	22%
3	Աշխատանքի վճարման գծով ծախսումներ	6,3	31%	6,3	32%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	9,4	47%	9,0	46%
4.1	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	9,0		8,5	
4.2	*այլ*	0,4		0,4	
	ԸՆԴԱՄԵՆԸ	20,2		19,6	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, 2017 թվականին ավարտված աշխատանքների մեծ մասն իրականացվել է ընկերության կողմից՝ սեփական ուժերով: Ավարտվել են ներդրումային ծրագրով համաձայնեցված աշխատանքներին ուղղված նախորդ տարիներին իրականացված 0,2 մլն դրամի աշխատանքներ:

ԲԱԺԻՆ 3.
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև ներկայացված է ընկերության կողմից 2017 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1 Համակարգչային և սերվերային տեխնիկայի համալրում և լրասարքերի ձեռքբերում

Ընկերության բնականոն զարգացումն ապահովելու համար համակարգչային և սերվերային տեխնիկայի համալրման և լրասարքերի ձեռքբերման նպատակով ներդրումային ծրագրով համաձայնեցված էր 5,8 մլն դրամ ներդրումներ: Մասնավորապես, նախատեսվում էր փոխարինել կենտրոնական սերվերի տվյալների բազայի կրկնօրինակումը ապահովող սերվերային համակարգը և ցանցային սարքավորումները: Այս ուղղությամբ ձեռքբերումներն իրականացվել են ամբողջությամբ՝ նախատեսվածից զգալի ցածր գներով, որոնց ծավալը կազմել է 1,4 մլն դրամ: Համաձայն ներկայացված Հաշվետվության ուսումնասիրության արդյունքների, ընկերությունը 2017 թվականին համակարգչային տեխնիկայի և լրասարքերի ձեռքբերման նպատակով իրականացրել է 2,2 մլն դրամ ներդրումներ, որոնք ևս ավարտված են:

3.2 Օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների ձեռքբերում և օպտիկամանրաթելային ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքներ

Հաշվառման համակարգի տվյալների օպերատիվ և հուսալի հավաքագրման և տեղափոխման նպատակով օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների ձեռքբերման և օպտիկամանրաթելային ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքների համար ներդրումային ծրագրով համաձայնեցված էր 17,6 մլն դրամ ներդրումներ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 15,8 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում օպտիկամանրաթելային ենթակառուցվածքի տեղադրման աշխատանքների ուղղությամբ իրականացվել են 6,7 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջությամբ ավարտվել են:

Համաձայն ներկայացված Հաշվետվության արդյունքների օպտիկամանրաթելային կոմունիկացիոն սարքավորումների ձեռքբերման

ենթաուղղության շրջանակում ձեռք են բերվել փոխակերպիչ սարքավորումներ, ցանցային կոմուտատորներ, ցանցային և հոսանքի բաշխիչ սարքավորումներ, ինչպես նաև օպտիկամանրաթելային մալուխներ: Այս ուղղությամբ ձեռք են բերվել նաև 0,7 մլն դրամ ծավալով համապատասխան պահեստամասեր, որոնք դեռևս շահագործման չեն հանձնվել:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 0,5 մլն դրամ՝ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2017 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2017 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծություն

1	**Իրականացված ներդրումներ**	**20,2**
2	**Անավարտ աշխատանքներ**	**0,7**
3	**2017 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**19,5**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**0,5**
4.1	Օտարված(վաճառված) հիմնական միջոցներ	0,5
5	**2017 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**19,0**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2017 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 83%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 19,5 մլն դրամ:

2017 թվականին իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 19,0 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №540Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 3-ի №147Ա որոշումը «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն -	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2018 թվականի մայիսի 10-ի №190-ՄՋ գրությամբ ներկայացված հաշվետվությունը: